Կարգապահական գործ թիվ ԿԳ-25064

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐԹՈՒՐ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ՔՅԱՐՈՒՆՑԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ նաև Պալատ)** կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, մասնակցությամբ Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Միքայել Դանիելյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Կարինե Բաղդասարյանի, Գուրգեն Թորոսյանի և Կարեն Խալաթյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

մասնակցությամբ՝ դիմող Մարգարիտ Սամվելի Առուստամյանի,

քննության առնելով փաստաբան Արթուր Անուշավանի Քյարունցին **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 1260) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Մարգարիտ Առուստամյանը **(այսուհետ՝ նաև Դիմող),** դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ, հայտնել է, որ ՍԴ3/1140/02/23 քաղաքացիական գործով իր կողմից որպես փաստաբան լիազորված է եղել Արթուր Քյարունցը, ով հայցադիմումը ներկայացրել է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, ՀՀ վերաքննիչ դատարան: Դիմողը հայտնել է նաև, որ Փաստաբանին անկանխիկ եղանակով վճարել է 200 000 ՀՀ դրամ:

Ըստ Դիմողի՝ 2024 թվականի նոյեմբեր ամսին Փաստաբանն իրեն հայտնել է, որ նշյալ գործով գրել է վճռաբեկ բողոք և ուղարկել ՀՀ վճռաբեկ դատարան, սակայն ինքը 2025 թվականի հունվար ամսվա վերջին ՀՀ վճռաբեկ դատարանից տեղեկացել է, որ բողոք չի ստացվել: Իր հարցին, թե ինչու չի ուղարկվել՝ Փաստաբանը պատասխանել է, որ ուղարկել է, բայց փոստով առաքման կտրոնը կորցրել է: Ինքը պահանջել է փաստաթղթերը, դրանից հետո Փաստաբանն աշխատավայրում չի եղել: Դիմողի

Թիվ ԿԳ-25064-2-Ա
25.06.2025թ.

հեռախոսազանգերին չի պատասխանել: Ինքը բազմաթիվ անգամ հարցրել է հետագա քայլերի, պայմանագրերի, լիազորագրերի, վճարումների մասին, իսկ Փաստաբանը պատասխանել է՝ «Համբերեք, վերջում կասեմ»: Դիմողը նաև նշել է, որ եթե պայմանագրում գրված է միայն առաջին ատյանի դատարան, ապա ի՞նչ իրավունքով է Փաստաբանը ներկայացրել վերաքննիչ բողոք, այնուհետև խաբել, թե ուղարկել է ՀՀ վճռաբեկ դատարան: Ըստ Դիմողի՝ անհրաժեշտ է ուսումնասիրել և բացահայտել՝ արդյո՞ք բոլոր հաճախորդների հետ է Փաստաբանը կնքում միայն առաջին ատյանի դատարան դիմելու համար պայմանագիր, այնուհետև առանց իրավունքի դիմում ՀՀ վերաքննիչ դատարան, կամ ՀՀ վճռաբեկ դատարան, գործերը թողնելով կիսատ:

Դիմողը հայտնել է նաև այն մասին, որ Փաստաբանը նշյալ քաղաքացիական գործի քննության տարբեր փուլերում ակտիվ քննարկումների, պայմանավորվածությունների մեջ է եղել պատասխանող կողմ հանդիսացող Գորիսի պետական համալսարանի ռեկտոր Տիգրան Վանդունցի հետ՝ կարծիք հայտնելով, որ դժվար չէ բացահայտել հեռախոսազանգերը և վերծանել դրանք: Ըստ Դիմողի՝ Փաստաբանն իրեն պարբերաբար տեղեկացրել է իրենց քննարկումների արդյունքների մասին, ինչը կարող է հաստատել առերեսմամբ: Դիմողի պնդմամբ՝ Փաստաբանը Դիմողին ասել է, որ Փաստաբանին է զանգահարել ռեկտոր Տիգրան Վանդունցը և ասել, թե ինչու՞ իրեն տեղյակ չեն պահել, որ գործով ցանկանում են դիմել ՀՀ վճռաբեկ դատարան:

Միևնույն ժամանակ Դիմողը հայտնել է, որ Փաստաբանը տարիներ առաջ հեռացվել է Գորիսի պետական համալսարանի մագիստրատուրայից՝ դասերին չներկայանալու պատճառով, իսկ վերջերս Դիմողին ասել է, որ արդեն պայմանավորվել է նոր ռեկտոր Տիգրան Վանդունցի հետ՝ ուսումը շարունակելու համար և անհամբեր սպասում է Դիմողի գործի ավարտին:

Բացի նշվածից՝ Դիմողը նաև հայտնել է, որ Փաստաբանը տարիներ առաջ աշխատել է որպես գործով դատավոր Մուրադ Հովակիմյանի օգնական: Իր հետ Փաստաբանը վճարովի ծառայության մատուցման պայմանագիր է կնքել 2023 թվականի հունվարին (որի մի օրինակն իրեն չի տրամադրել, չունի պայմանագրերի գրանցամատյան), սպասել է՝ մինչև Մուրադ Հովակիմյանը տեղափոխվի Գորիս, վերադառնա արձակուրդից, այնուհետև երբ մի քանի անգամ հարցրել է, թե ում մոտ են իր փաստաթղթերը (այդ մասին Դիմողի պնդմամբ՝ իր հեռախոսի մեջ որպես փաստ կան հաղորդագրություններ)՝ 5 ամիս հետո, նոյեմբերի վերջին հայցադիմումն ուղարկել է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան: Դիմողի պնդմամբ՝ Փաստաբանն իրեն խաբել է, դատավոր Մուրադ Հովակիմյանի կայացրած վճռի, ՀՀ վերաքննիչ դատարանի որոշման դեմ ՀՀ վճռաբեկ դատարան բողոք չի ներկայացրել:

Դիմողը նաև նշել է, որ 2025 թվականի փետրվարի 07-ին հաղորդում է ներկայացրել Գորիսի ոստիկանություն, սակայն չիմանալով՝ բողոքը գրել է մասնակի, վերոնշյալ փաստերը չի գրել, գրել է փաստաթղթերը հետ վերցնելու համար: Գորիսի Քննչական կոմիտեն իրեն պատասխանել է, որ քաղաքացիաիրավական պայմանագիրն է հիմքում, քրեական վարույթ չի նախաձեռնվում, առանց հաշվի առնելու, որ ինչպես է նա դիմել ՀՀ վերաքննիչ դատարան:

Դիմողը հայտնել է նաև, որ Փաստաբանի արարքների արդյունքում ինքը տուժել է, զրկվել է նշյալ գործի հետ կապված հետագա քայլեր իրականացնելու

հնարավորությունից, որովհետև ՀՀ վճռաբեկ դատարան դիմելու ժամկետը լրացել է: Խնդրել է Փաստաբանի աշխատանքային վարքագիծը քննարկել և պատասխանատվության ենթարկել:

Սույն կարգապահական վարույթը հարուցվելուց հետո, կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ Դիմողին 2025 թվականի ապրիլի 14-ի «Պահանջ» վերտառությամբ փաստաթղթով առաջարկվել է այն ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ: Նշված գրությանն ի պատասխան՝ Դիմողը սահմանված ժամկետում ներկայացրել է ապացույցներ:

Հանձնաժողովի նիստին Դիմողը մասնակցել է ու պնդել իր դիրքորոշումը:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը Փաստաբանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն Դիմողի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը 2025 թվականի մարտի 03-ին Պալատ մուտքագրված բացատրությամբ հայտնել է, որ իր և Մարգարիտ Առուստամյանի միջև 2023 թվականի հունիսի 30-ին կնքված փաստաբանական ծառայություն մատուցելու վերաբերյալ պայմանագրի (այսուհետ նաև՝ Պայմանագիր) 2.1 կետի համաձայն՝ ինքը՝ որպես կատարող, պարտավորվել է կազմակերպել Մարգարիտ Սամվելի Առուստամյանի իրավունքների և շահերի պաշտպանությունը ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ըստ հայցի Մարգարիտ Սամվելի Առուստամյանի ընդդեմ «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի՝ չվճարված աշխատավարձի բռնագանձման պահանջի մասին ներկայացվելիք պահանջի շրջանակներում, կազմել հայցադիմում և ներկայացնել դատարան, իրականացնել ներկայացուցչություն քաղաքացիական գործի շրջանակներում:

Փաստաբանը նշել է նաև, որ հայցադիմումի ներկայացման վերաբերյալ տեղեկատվությունն առաջին անգամ www.datalex.am դատական տեղեկատվական համակարգում արտացոլվել է 2023 թվականի նոյեմբերի 23-ին և մակագրվել նույն դատարանի դատավոր Մ. Հովակիմյանին:

Ըստ Փաստաբանի՝ Մարգարիտ Սամվելի Առուստամյանն իր դժգոհությունն է արտահայտել դիմում-բողոքում նշված այն դիտարկմամբ, որ Փաստաբանը պատասխանող կազմակերպության ռեկտոր Տիգրան Վանդունցի հետ եղել է «ակտիվ» քննարկումների մեջ: Փաստաբանն իր հերթին վերոնշյալ դիտարկմանը պատասխանել է, նշելով, որ քննարկումները վերաբերել են միայն անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերմանը, ինչպես նաև հարցի արտադատական կարգով լուծմանը, ինչպես նաև, Փաստաբանը շեշտել է, որ քննարկումների վերաբերյալ պատվիրատուին տեղեկացնելու փաստը ևս խոսում է թափանցիկ գործելու մասին, ավելացնելով, որ ինքը Տիգրան Վանդունցին ճանաչում է որպես Գորիս քաղաքի բնակիչ և պատասխանող կազմակերպության ռեկտոր, ընդգծելով այն փաստը, որ այլ հարաբերություններ նրա հետ չի ունեցել:

Փաստաբանը հայտնել է, որ իր՝ տարիներ առաջ «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի մագիստրատուրայից դասերին չներկայանալու հիմքով հեռացվելը օգտագործվել է որպես պատրվակ, իսկ իրական պատճառն ըստ Փաստաբանի՝ հանդիսացել է այն, որ ինքը գործել է ընդդեմ «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի թիվ ՍԴ3/0097/02/19 քաղաքացիական գործով ըստ հայցի Հասմիկ Թունյանի ընդդեմ «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի՝ աշխատանքային պայմանագիրը երկարաձգելու և չվճարված աշխատավարձի բռնագանձման մասին: Փաստաբանը հարկ է համարել նշել, որ նույնիսկ նման պայմաններում, իր վստահորդի շահերն ավելի վեր է դասել, քան իր անձնական՝ ուսումը շարունակելու շահը: Նշված քաղաքացիական գործով, ինքը հանդիսացել է «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի աշխատակից՝ Հասմիկ Թունյանի ներկայացուցիչը:

Փաստաբանը նշել է, որ պատվիրատուի դիտարկումն այն մասին, իբրև ինքը պայմանավորվել է ռեկտոր Տիգրան Վանդունցի հետ և անհամբեր սպասում է գործի ավարտին, սին է, նշելով այն հանգամանքը, որ մագիստրատուրայում թե՛ առկա, և թե՛ հեռակա ուսումնառության համար փաստաթղթերի ընդունման ժամկետներն ավարտված են, ընդունելության համար փաստաթղթեր ինքը չի հանձնել և չի էլ պատրաստվում հանձնել:

Փաստաբանը հաստատել է իր՝ 2009-2019թթ. որպես ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մ. Հովակիմյանի օգնական աշխատելու փաստը: Ավելացրել է, որ ինքը աշխատանքից ազատվել է սեփական դիմումի համաձայն:

Փաստաբանը հայտնել է, որ ՀՀ նախագահի 2020 թվականի ապրիլի 16-ի թիվ ՆՀ-80-Ա հրամանով ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մ. Հովակիմյանը նշանակվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր, որտեղ ինքն աշխատել է մինչև 2023 թվականի հունիսի 8-ը: Նշված ժամանակահատվածում դատավոր Մ. Հովակիմյանի հետ ինքը որևէ տեսակի շփում չի ունեցել, նրա նախագահությամբ քննվող գործերով չի մասնակցել:

Փաստաբանը նշել է, որ ՀՀ նախագահի 2023 թվականի հունիսի 8-ի թիվ ՆՀ-190-Ա հրամանով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մուրադ Հովակիմյանը նշանակվել է ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր, ինչից հետևում է, որ պատվիրատուի այն դիտարկումը, թե իբրև Փաստաբանը սպասել է մինչև Մ. Հովակիմյանը տեղափոխվի Գորիս քաղաք, չի կարող համապատասխանել իրականությանը: Դրա մասին է վկայում նաև այն, որ իր և պատվիրատուի միջև պայմանագիրը կնքվել է դատավոր Մ. Հովակիմյանի՝ ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի պաշտոնում նշանակվելուց շուրջ 22 օր անց:

Փաստաբանը հարկ է համարել նշել նաև, որ առաջին դատական նիստի ընթացքում, որին մասնակցել է նաև պատվիրատուն՝ որպես հայցվոր, գործը քննող դատավոր Մ. Հովակիմյանը գործին մասնակցող անձանց առջև բացահայտել է նրա ենթակայության ներքո՝ իր՝ որպես դատավորի օգնական աշխատելու փաստը, առաջարկել է նույնիսկ նրա բացակայությամբ քննարկել բացարկ հայտնելու հարցը, սակայն գործին մասնակցող

անձինք, այդ թվում՝ հայցվորը, նման միջնորդություն չեն ներկայացրել, ինչը հիմք է հանդիսացել գործի քննությունը շարունակելու համար:

Վերաքննիչ բողոք ներկայացնելու մասով, Փաստաբանը նշել է, որ թեև նման պարտավորություն չի ստանձնել, այնուհանդերձ բարի կամք դրսևորելով, ցանկանալով աջակցել պատվիրատուին, անվճար, պայմանագրով ստանձնած պարտավորություններից զատ, կազմել և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան է ներկայացրել վերաքննիչ բողոք: Վերաքննիչ բողոքի ներկայացման, վերաքննիչ ատյանում գործի ընթացքի մասին պատվիրատուն որպես գործին մասնակցող անձ պատշաճ կարգով տեղեկացվել է: Փաստաբանը շեշտել է, որ անգամ, եթե իրավիճակը դիտարկվի այն տեսանկյունից, որ այդ մասով բացակայել է պատվիրատուի համաձայնությունը, ապա վերջինս զրկված չէր ներկայացված բողոքից հրաժարվելու իրավունքից, ավելին, վերջինս ողջունել է նման մոտեցման ցուցաբերումը:

Վճռաբեկ բողոք ներկայացնելու մասով, Փաստաբանը նշել է, որ նման պարտավորություն չի ստանձնել, թեև կրկին ցանկացել է աջակցել պատվիրատուին: Այդ ուղղությամբ ինքը կազմել է վճռաբեկ բողոք, սակայն տեխնիկական խնդիրների պատճառով այն հասցեատիրոջը չի հասել, որի մասին ինքը տեղեկացել է պատվիրատուից: Փաստաբանը հնարավոր է համարել իր՝ աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառով այն փոստային առաքմանը չհանձնելու կամ սխալմամբ այլ՝ սխալ հասցեով ուղարկելու հավանականությունը:

Ինչ վերաբերում է որոշակի փաստաթղթեր, այդ թվում՝ դատավարական, հետ վերադարձնելու պահանջին, ապա այս մասով Փաստաբանը նշել է, որ աշխատանքային ծանրաբեռնվածությունից ելնելով, հնարավոր չի եղել դրանք հանձնել պատվիրատուին, սակայն ինքը պարտավորվում է բոլոր այն փաստաթղթերը, որոնք հանձնվել էին ծառայությունների կատարման նպատակով, փոստային առաքմամբ 2025թ. փետրվարի 11-ին վերադարձնել Մարգարիտ Սամվելի Առուստամյանին:

Հաշվի առնելով նշված հանգամանքները, փաստաբանը գտել է, որ իրեն կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը բացակայում են, ինչպիսի պայմաններում կարգապահական վարույթի հարուցումը «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ նաև՝ Օրենք)** 39.3-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով ենթակա է մերժման:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթը հարուցվելուց հետո, կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ Փաստաբանին 2025 թվականի ապրիլի 14-ի «Պահանջ» վերտառությամբ փաստաթղթով առաջարկվել է այն ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, ինչին Փաստաբանը չի արձագանքել, լրացուցիչ դիրքորոշում և/կամ նյութեր չի ներկայացրել:

Հանձնաժողովի նիստ(եր)ին Փաստաբանը չի մասնակցել:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը</u>.

Պալատի նախագահի 2025 թվականի մարտի 13-ի թիվ 120-Ա/ԿԳ-25064 որոշմամբ Փաստաբանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես

նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք)** 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

Կարգապահական գործի նախապատրաստումը 2025 թվականի մարտի 17-ին հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Գարիկ Հախնազարյանին (**այսուհետ նաև՝ Աշխատակից**):

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 2025 թվականի մայիսի 16-ին կազմել է եզրակացություն, որում շարադրվել են կարգապահական գործի կողմերի դիրքորոշումները, գործում առկա նյութերի ցանկը և էական այլ տվյալներ:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 2025 թվականի մայիսի 16-ին, այնուհետև Հանձնաժողովի նախագահի 2025 թվականի մայիսի 19-ի թիվ ԿԳ-25064-1-Ա որոշմամբ ընդունվել է Հանձնաժողովի վարույթ:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-3 կետերում նշված փաստերը:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 2025 թվականի հունիսի 25-ի ժամը 18:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ՀՀ, ք. Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբանի և Դիմողի միջև 2023 թվականին կնքվել է փաստաբանական ծառայություն մատուցելու վերաբերյալ պայմանագիր, որով Փաստաբանը պարտավորվել է Դիմողին փաստաբանական ծառայություններ մատուցել ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ հստակեցված իրավական վեճի շրջանակներում: *Տվյալ փաստը հաստատվում է Փաստաբանի կողմից ներկայացված պայմանագրի պատճենով, որի իսկությունն ու իրավաբանական այլ հատկանիշները Հանձնաժողովը լիազորված չէ կասկածի տակ առնել:*

2. Փաստաբանը նույն գործով Դիմողի անունից ներկայացրել է նաև վերաքննիչ բողոք, թեև Դիմողի հետ կնքված պայմանագիրը չի նախատեսել վերաքննիչ վարույթում ծառայությունների մատուցում: *Տվյալ փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի բացատրություններով, «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տվյալներով:*

3. Թեև Դիմողի հետ կնքված պայմանագիրը չի նախատեսել Փաստաբանի կողմից վճռաբեկ վարույթում Դիմողին ծառայությունների մատուցում, այդուհանդերձ Փաստաբանը Դիմողի առջև ստանձնել է վճռաբեկ բողոք կազմելու և ներկայացնելու հանձնառությունը, ավելին՝ Դիմողին հայտնել է, որ վճռաբեկ բողոքն իր կողմից կազմվել ու ներկայացվել է Վճռաբեկ դատարան: *Տվյալ փաստը հաստատվում է Դիմողի և*

Փաստաբանի բացատրություններով:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Պատասխանողը փաստաբան է հանդիսանում 2011 թվականի հոկտեմբերի 15-ից և 2020-2025թթ. ընկած ժամանակահատվածում փաստաբանը չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի մասով Փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ պայմանավորված այդ մասով Փաստաբանի վարքագծում խախտման առկայությամբ:

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ... :*

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է՝*

1) ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով.

2) պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները.

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝ ա. նյութերի ուսումնասիրությունը, բ.*

վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը, գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը, դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի համադրված վերլուծության ու մեկնաբանության շրջանակներում Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբանը յուրաքանչյուր գործ ստանձնելիս պետք է օժտված լինի տվյալ գործը պատշաճ վարելու համար անհրաժեշտ օրենսդրական կարգավորումների բավարար իմացությամբ ու գործնական փորձով, ինչպես նաև աշխատանքի ու հաղորդակցության կազմակերպման, անհրաժեշտ հետևողականության համապատասխան հմտություններով ու հնարավորություններով:

Նշվածը ոչ միայն մասնագիտական, այլև վարքագծային-էթիկական նշանակության կանոն է, առանց որի կատարման հնարավոր չէ կամ առնվազն վտանգված է տվյալ գործով բարեխիղճ իրավական օգնության տրամադրումը, ներառյալ նաև՝ հնարավոր իրավական հետևանքների գիտակցումն ու դրանց առաջացման մասին իրազեկումը վստահորդին, ինչպես նաև գործը պատշաճ վարելու համար անհրաժեշտ գործողությունների կատարումը և հակառակի արդյունքում վստահորդին սպասվող անբարենպաստ, սակայն կանխելի հետևանքների կանխարգելումը:

Ավելին, քննարկվող դրույթների բովանդակությունը ներառում է փաստաբանի կողմից իր ստանձնած գործառույթների կատարման ժամանակավրեպության բացառումը՝ ենթադրելով, որ փաստաբանի գործողություններն այլ չափանիշներին համապատասխանելուց զատ՝ պետք է լինեն նաև ժամանակին, այլապես նույնիսկ ամենաորակյալ փաստաբանական օգնությունը կարող է ապարդյուն և երբեմն նույնիսկ վնասարար լինել վստահորդի համար:

Նշվածի շրջանակներում անդրադառնալով Փաստաբանի վարքագծում Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտման առկայությանը՝ Հանձնաժողովը հատուկ ընդգծում է, որ միայն գործի կամ հարցի՝ ոչ ի նպաստ վստահորդի ընթացքը և/կամ լուծումն ինքնին, առանց լրացուցիչ փաստերի ու հանգամանքների, չի կարող մեկնաբանվել որպես Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտման բավարար հիմնավորում, ինչը բխում է նաև Օրենքի 39.1 հոդվածի 3-րդ մասից:

Այդուհանդերձ, որևէ գործի կամ հարցի՝ ոչ ի նպաստ վստահորդի ընթացքը և/կամ լուծումն ինքնին բավարար հիմք է՝ Փաստաբանի վարքագծում Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտման առկայությունը քննելու համար, եթե առկա է կարգապահական վարույթ:

Վերոնշյալ դատողությունների շրջագծում անդրադառնալով տվյալ կոնկրետ դեպքում Փաստաբանի վարքագծի իրավաչափությանն ու համապատասխանությանը Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի պահանջներին՝ Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի վարքագծում վկայակոչված դրույթներով նախատեսված խախտումներն առկա են, քանի որ տվյալ կոնկրետ դեպքում Փաստաբանը, անկախ Դիմողի հետ կնքված պայմանագրի

բովանդակությունից, Դիմողի առջև հանձն է առել Դիմողին փաստաբանական ծառայությունների մատուցումը նաև վերաքննիչ ու վճռաբեկ ատյաններում, սակայն նման պայմաններում Փաստաբանը փաստացի թերացել է վճռաբեկ ատյանում Դիմողին փաստաբանական ծառայությունների մատուցման հարցում՝ ի նպաստ Դիմողի կայացված դատական ակտի դեմ Դիմողի անունից ՀՀ վճռաբեկ դատարան չներկայացնելով վճռաբեկ բողոք, որի ներկայացումը Փաստաբանը հանձն է առել ու ավելին՝ Դիմողին նույնիսկ հայտնել իր այդ հանձնառությունն իբրև կատարված լինելու մասին, ինչը փաստացի չի համապատասխանել իրականությանը:

Այսպիսով, Փաստաբանը փաստացի չի կատարել Դիմողին պատշաճ փաստաբանական օգնություն ցուցաբերելու համար անհրաժեշտ բոլոր գործողությունները, մասնավորապես՝ Դիմողի առջև ստանձնելով ի վնաս Դիմողի կայացված դատական ակտը վճռաբեկության կարգով բողոքարկելու հանձնառությունը՝ այն չի կատարել, իսկ հակառակը հաստատող որևէ ապացույց Փաստաբանը չի վկայակոչել ու չի ներկայացրել:

Հանձնաժողովն արձանագրում է նաև, որ Փաստաբանն իրավասու չէր առանց Դիմողի համաձայնության՝ զերծ մնալ ի վնաս Դիմողի կայացված դատական ակտը բողոքարկելուց, սակայն դրսևորել է հակառակ վարքագիծ ու շեղվել իր իսկ կամավոր ստանձնած հանձնառությունից՝ այդպիսով ևս չցուցաբերելով բարեխիղճ իրավական օգնություն Դիմողին:

Հանձնաժողովը հատուկ ընդգծում է, որ Դիմողի ու Փաստաբանի միջև կնքված պայմանագրում վճռաբեկ ատյանում ծառայությունների մատուցման վերաբերյալ դրույթների բացակայությունն ինքնին խոչընդոտ կամ առավել ևս արգելք չէ Փաստաբանի կարգապահական պատասխանատվության համար, քանզի Հանձնաժողովը քննում է ոչ թե մասնավոր-իրավական (քաղաքացիաիրավական) ոլորտի պայմանագրային և/կամ պարտավորաիրավական վեճ, այլ՝ քննարկում է կոնկրետ իրավիճակում Փաստաբանի բուն վարքագծի համապատասխանությունը կիրառելի վարքագծային-էթիկական պահանջներին, որպիսի հարցի քննարկման համար կողմերի պայմանագրային ու պարտավորական հարաբերությունների բովանդակությունը վճռորոշ չէ:

Ողջ վերոգրյալի հիման վրա Հանձնաժողովը գտնում է, որ նախորդիվ նկարագրվածն ինչպես առանձին վերցված, այնպես էլ համակցությամբ պարունակում է Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտում՝ Փաստաբանի կողմից, ընդ որում՝ Փաստաբանի մեղքի բացակայության մասին ապացույցներ առկա չեն, որպիսի պարագայում Փաստաբանն այս մասերով ենթակա է կարգապահական պատասխանատվության:

<u>8. Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի՝ սույն որոշմամբ նկարագրված խախտման համար պետք է կիրառել հիմնական կարգապահական տույժ՝ «խիստ նկատողություն»՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ *փաստաբանների պալատի խնդիրներն են՝ վերահսկողություն իրականացնել իր անդամների կողմից սույն օրենքի, փաստաբանների պալատի կանոնադրության և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների պահպանման, ինչպես նաև «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ.*

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Օրենքի 39.10 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամանակը որոշում է փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ տույժի միջոց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված տույժերից մեկի կիրառման հետ մեկտեղ:*

Օրենքի 39.10 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *Տուգանքի չափը սահմանում է փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը, որը չի կարող գերազանցել սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկը: Տուգանքը փաստաբանը վճարում է փաստաբանների պալատի բյուջե:*

Վերը նշված իրավական նորմերի համակարգային մեկնաբանության արդյունքում Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ Պալատը հանդիսանում է փաստաբանների մասնագիտական, ինքնակառավարվող միավորում, որի խնդիրներից մեկը փաստաբանների իրավաչափ և փաստաբանի վարքագծի կանոններին համապատասխանող վարքագծի ապահովումն է: Սույն խնդրի իրացման հիմնական իրավական միջոցներից մեկը Հանձնաժողովի կարգապահական գործառույթն է, որը դրսևորվում է Օրենքով և Հանձնաժողովի գործունեության կարգով սահմանված ընթացակարգով փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննարկելով և լուծելով:

Օրենքով հստակ նախատեսված են կարգապահական պատասխանատվության միջոցների այն տեսակները, որոնք Հանձնաժողովն իրավասու է կիրառել՝ խախտում թույլ տված փաստաբանների նկատմամբ: Ընդ որում, Օրենքում ամրագրված են փաստաբանի պատասխանատվության անհատականացման համար կիրառելի չափանիշներ:

Օրենքով Հանձնաժողովին վերապահված կարգապահական գործառույթից և այդ թվում փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ իրականացնելու և կարգապահական տույժ կիրառելու իրավազորությունից հետևում է, որ Հանձնաժողովը ոչ միայն իրավասու է, այլև պարտավոր է կարգապահական վարույթի քննության յուրաքանչյուր դեպքում իրականացնել փաստաբանի կողմից կատարված արարքի որակում Օրենքի և Կանոնագրքի շրջանակներում և դրան համապատասխան՝ նշանակել համապատասխան կարգապահական տույժ, եթե առկա է խախտում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, խոսելով իրավունքների սահմանափակումների իրավաչափության մասին, առանձնացնում է հետևյալ հիմնական տարրերը՝ նպատակի իրավաչափություն, իրավաչափ նպատակի և այդ նպատակին հասնելու համար կիրառված միջոցների միջև համաչափության ողջամիտ հարաբերակցություն (Case of Khalfaoui v. France, 14.03.2000) :

Սույն պարագայում Փաստաբանին նշված կարգապահական տույժի ենթարկելու իրավաչափ նպատակն Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով Պալատի վրա դրված խնդիր-պարտականության իրացումն է՝ ապահովել փաստաբանների կողմից ՀՀ օրենսդրության և փաստաբանական էթիկայի նորմերի պահպանումը փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման և կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջոցով, իսկ ընտրված միջոցի համապատասխանությունը բխում է ընտրված կարգապահական տույժը նշանակելիս և Օրենքի 39.10-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվության անհատականացման չափանիշները կիրառելիս Պատասխանողի վարքագծի ծանրության, մեղքի աստիճանի և Պատասխանողի անձը բնութագրող հատկանիշների քննությունից ու համադրությունից, մասնավորապես՝ տվյալ պարագայում Հանձնաժողովը հաշվի է առնում այն փաստը, որ տվյալ իրավիճակում Փաստաբանը թույլ տված խախտման արդյունքում Դիմողին փաստացի զրկել է ի վնաս Դիմողի կայացված դատական ակտը վճռաբեկության կարգով բողոքարկելու, այդպիսով նաև՝ Դիմողի սեփականության սահմանադրական իրավունքի հարցով դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքներն իրացնելու հնարավորությունից, ինչը փաստացի հանգեցրել է գործը վերջնականապես ի վնաս Դիմողի եզրափակվելուն՝ միաժամանակ հիմք դառնալով նաև փաստաբանների հանդեպ Դիմողի վստահության որոշակի խաթարման համար՝ ինչպես նշել է Դիմողը նիստի ընթացքում:

Այսինքն, Հանձնաժողովի գնահատմամբ, Փաստաբանի թույլ տված խախտումներն ունեն ինչպես ոչ նյութական կամ փաստացի, այնպես էլ նյութական կամ բովանդակային անբարենպաստ նշանակություն Դիմողի համար, ինչը հանգեցնում է արարքն ու պատասխանատվությունն էապես ծանրացնող հանգամանք և թելադրում է այդպիսի վարքագծին խիստ ներգործելու անհրաժեշտությունը՝ ապահովելու համար

այդպիսի ներգործության արդյունավետությունն ինչպես Փաստաբանի, այնպես էլ Դիմողի նկատմամբ:

Հանձնաժողովն ընդգծում է նաև, որ Փաստաբանի մեղքի բացակայության մասին ապացույցներ ձեռք չեն բերվել, իսկ Փաստաբանն այդպիսի փաստարկ նույնիսկ չի կատարել:

Հետևաբար, Հանձնաժողովի գնահատմամբ՝ Փաստաբանի նկատմամբ որպես հիմնական կարգապահական տույժ անհրաժեշտ է կիրառել «խիստ նկատողություն» տույժի տեսակը՝ հաշվի առնելով նախորդիվ կատարված դատողությունները:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով նաև Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասով, 39-րդ հոդվածի 1-ին մասով, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով և 7-րդ մասով, 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, նույն հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերով՝ Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Արթուր Անուշավանի Քյարունցի (արտոնագիր՝ թիվ 1260) նկատմամբ կիրառել հիմնական կարգապահական տույժ՝ «խիստ նկատողություն»՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի՝ սույն որոշմամբ նկարագրված խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

թիվ ԿԳ-25064-2-Ա
25 հունիսի 2025թ.
ք.Երևան